ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(2), 2021 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 338.46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
(Կալավան համայնքի օրինակով)

Ս. Ս. ՔԵԼՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Զբոսաշրջությունն իր գործառույթներով դարձել է ցանկացած տարածաշրջանի տնտեսության զարգացման առանցքային ճյուղերից մեկը: Այն ստեղծում է աշխատատեղեր, ապահովում է բնակչության կենսամակարդակի բարձրացում, տվյալ տարածաշրջանի արագ զարգացում: Զբոսաշրջությունն այն ճյուղն է, որը սակավ ներդրումներով ապահովում է կարճ ժամանակահատվածում ֆինանսական միջոցների աճ: Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել զբոսաշրջության զարգացման հնարավորությունները Գեղարքունիք մարզի Ճամբարակի տարածաշրջանի Կալավան գյուղի օրինակով:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.2.159

***Keywords*:** sustainable tourism, ecotourism, rural tourism, ecology, science tourism, community investment, human resources, natural resources, tourist destination.

Խնդրի դրվածքը: Գյուղական զբոսաշրջությունը հիմնականում հասարակության տնտեսապես անապահով խավի, ինչպես նաև լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ, կամ ծայրամասային շրջաններում բնակչության կողմից իրականացվող զբոսաշրջային ծառայությունների ձև է: Գյուղական բնակավայրը ներառում է անհատների, ովքեր ստանձնել են թիմային պարտականություններ և ի վիճակի են ընդունել միասնական որոշումներ: Գյուղական զբոսաշրջությունը հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին բացահայտել տեղի բնությունը, մարդկանց կենցաղը, տեղական ավանդույթները և ժողովրդի առօրյան: Գյուղի բնակիչները պետք է քաջատեղյակ լինեն իրենց բնական և մշակութային ժառանգության արժեքներին՝ դրանք պաշտպանելու և դրանց միջոցով զբոսաշրջության զարգացումն ապահովելու նպատակով:

Բնակիչները ներգրավված են զբոսաշրջային արտադրանքի զարգացման մեջ և շահույթ են ստանում որպես գործարարներ, ծառայություն մատուցողներ և աշխատակիցներ: Տեղի բնակիչները կարող են համագործակցել մասնավոր և հանրային սեկտորում ցանկացած կազմակերպությունների հետ՝ իրենց առաջարկները զարգացնելու և խթանելու նպատակով: Բնակավայրերը, որոնք

* E-mail: s.qelyan@ysu.am

ցանկանում են կայուն կերպով զարգացնել զբոսաշրջությունը, հաճախ աջակցություն են ստանում այն նախագծերի միջոցով, որոնք ուղղված են ոչ միայն զբոսաշրջության ենթակառուցվածքների բարելավմանը, այլև տեղացիների կյանքի որակի բարձրացմանը: Այդ բոլորը գյուղը կարող է դարձնել զբոսաշրջային դեստինացիա, որն էլ հանդիսանում է կայուն զբոսաշրջության զարգացման հենարանը գյուղերում [1]:

Հետազոտության հիմնական և ակնկալվող արդյունքները: Դեռ 2002 թ.-ին, համաձայն կառավարության N 43 որոշման, ՀՀ համայնքներում ներդրվել է զբոսաշրջության զարգացման ծրագիր: Ծրագրի հիմնական նպատակն է՝ նոր աշխատատեղերի ստեղծում, տնտեսության այլ ճյուղերի զարգացում՝ կապված զբոսաշրջային ծառայությունների արտադրության և մատուցման հետ, զբոսաշրջության ոլորտի գործարար միջավայրի ակտիվացում, ներդրումային բարենպաստ դաշտի ձևավորում, սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների զարգացում, համայնքներում մշակութային գործունեության ակտիվացում, արտարժույթի հոսքի ավելացում, համայնքի բնակչության կենսամակարդակի աճի ապահովում:

Զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է գյուղի բյուջեի համալրում, որոշակի ժամանակամիջոցում ՀՀ գյուղական բնակավայրերում ձևավորված զբոսաշրջության ոլորտի կոմերցիոն համակարգի ստեղծում, միասնական տեղեկատվական ցանցի գործունեություն, զբոսաշրջության կայուն զարգացման նախադրյալների ստեղծում, բնակչության զբաղվածության խնդրի լուծում, համայնքների կողմից ներքին և արտաքին ներդրումային դաշտի ուժեղացում:

Սովորաբար բնակավայրերի զարգացման ծրագրերը պայմանավորված ընդգրկված բնակավայրերի բնական պայմանների սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ կարող են իրականացվել մի քանի փուլերով: Հոդվածի շրջանակներում ընդգրկված բնակավայրի զարգացման ծրագիրը իրականացվում է երեք փուլով՝

***Առաջին փուլ*:**

1. Հաշվառել և առանձնացնել զբոսաշրջային ռեսուրսների կադաստր:
2. Ըստ այդ հաշվառման արդյունքների՝ կատարել հանրապետության տարածքի զբոսաշրջային դեստինացիայի առանձնացում:
3. Ստեղծված զբոսաշրջային դեստինացիաներում մարզպետարանների, գյուղական բնակավայրերի ներկայացուցիչների, զբոսաշրջային օպերատորների, տրանսպորտային, կոմունիկացիոն համակարգերի, մշակութային, բնապահպանական ոլորտների համապատասխան մասնագետների հետ համատեղ որոշել զբոսաշրջային դեստինացիաներ: Այս փուլում էական խնդիր է զբոսաշրջային դեստինացիաների ռեսուրսային (քաղաքաշինական, կոմունիկացիոն, մարդկային) գնահատականը և նրանց հեռանկարային նշանակությունը:
4. Գյուղերի հետ համատեղ և նրանց օժանդակությամբ անցկացնել սեմինարների շարք բնակչության շրջանում:
5. Զբոսաշրջային դեստինացիաներում կատարել մարդկային ռեսուրսների կամավոր հիմունքներով հավաքագրում:
6. Իրականացնել կրթական ծրագիր:
7. Դասընթացներին մասնակցած համապատասխան մարդկանց միջոցով զբոսաշրջային դեստինացիաներում աջակցել հասարակական կառույցների՝ ձևավորմանը (այսուհետ՝զբոսաշրջային միություններ):
8. Ձևավորել զբոսաշրջային դեստինացիայի կառավարման մարմնի աշխատանքային ծրագիր:

***Երկրորդ փուլ*:**

1. Զբոսաշրջային դեստինացիաների շրջանակներում, յուրաքանչյուր զբոսաշրջային միությունում, մասնակից անդամների ուժերով անցկացնել զբոսաշրջային ռեսուրսների վերջնական հաշվառում:

2. Կառավարման մարմնի անդամների հետ համատեղ ստեղծել տեղեկատվական բանկեր և մշտապես գործող տեղեկատվական կենտրոններ:

3. Հանրապետության տարածքում զբոսաշրջային բոլոր կենտրոնների տեղեկատվական կենտրոնները միավորել միացյալ տեղեկատվական ցանցում:

4. Ստեղծել տեղեկատվական ցանցի կոորդինացիոն մարմին՝ Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀԳ) տեղեկատվական կենտրոնի բազայի վրա:

***Երրորդ փուլ*:** Այս փուլը նախատեսում է արդեն շուկայական մեխանիզմների գործընթաց, որոնք ինքնաբերաբար կծնվեն գոյություն ունեցող առաջարկի և ձևավորվող պահանջարկի փոխհարաբերությունների արդյունքում: Այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել համակողմանի օգնություն (զբոսաշրջային միավորների բազայի վրա) կոմերցիոն համակարգի ստեղծմանը: Կոմերցիոն համակարգը ոչ միայն տվյալ զբոսաշրջային միավորի նախնական շրջանում հասարակական, հետագայում նաև կոմերցիոն զբոսաշրջային գործունեության իրականացման արդյունքն է, այլև դրա հետևանքով այցելությունների աճին զուգընթաց այլ կոմերցիոն ենթակառուցվածքների շուկայական առաջարկի ձևավորումը: Սկզբնապես դրանք կարող են լինել ուղեկցորդների, տրանսպորտային, գիշերակացի, սննդի որոշ ծառայություններ, որոնք կմատուցվեն զբոսաշրջային միությունների միջնորդությամբ, իսկ հետագայում, այդ միությունների կոմերցիոն կառույցների վերափոխման արդյունքում, այդ ծառայությունները կձևավորվեն զբոսաշրջային փաթեթների մեջ և կտրամադրվեն տարբեր զբոսաշրջային գործակալներին, ինչպես նաև կիրացվեն զբոսաշրջային արդյունքի անմիջական սպառողներին [2]:

Ինչպես նշել ենք, վերը նշված ծրագրի փուլային տարբերակները կիրառվել է Կալավան գյուղում: Տարածքը՝ 9,1 *կմ*^{2}, բնակչությունը՝ 107 մարդ (2020 թ.):

Գյուղական բնակավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզում, Ճամբարակի քաղաքային համայնքի կազմում, Արեգունի լեռնաշղթայի հյուսիսարևելյան ստորոտում:

Հեռավորությունը նախկին շրջկենտրոն Ճամբարակից 30 *կմ* հյուսիս-արևմուտք է, մարզկենտրոն Գավառից՝ 132 *կմ* հյուսիս-արևելք Երևանից՝ 161 *կմ*: Գտնվում է Դիլիջան ազգային պարկի սահմաններում, ծովի մակարդակից 1600 *մ* բարձրության վրա:

Կլիման բարեխառն ցամաքային է: Ձմեռը չափավոր ցուրտ է, կայուն ձնածածկույթով: Ամառը տաք է ու զով: Հունվարյան միջին ջերմաստիճանը, -5°C է, նվազագույնը՝ –30°C, հուլիսյան միջինը՝ 17–18°C, առավելագույնը՝ 33°C, տեղումների տարեկան քանակը՝ 650–670 *մմ*: Լանդշաֆտն՝ անտառային: Կալավան գյուղը տեղադրված է Բարեբեր գետի ափին [3]:

Հիմնադրվել է 1800 թ.-ին: Մինչև 1988 թ. բնակեցված էր ադրբեջանցիներով, այնուհետև այստեղ եկան հայ ընտանիքներ Շամխորի շրջանից նաև ՀՀ Ճամբարակի նախկին շրջանի Արծվաշեն գյուղից: 1991 թ. գյուղը վերանվանվեց Կալավան:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ, պտղաբուծությամբ, ինչպես նաև

մեղվաբուծությամբ, տավարաբուծությամբ, խոզաբուծությամբ և թռչնաբուծությամբ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց, ակումբ գրադարան, առևտրի և սպասարկման կետ:

Տարածքում կան արվեստի հիասքանչ նմուշներ հանդիսացող խաչքարեր, գեղատեսիլ, անտառապատ տարածքներ, հանքային ջրեր, միջնադարյան գյուղատեղի, կիսավեր մատուռներ: Հայաստանի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված են 22 հուշարձաններ, որոնց ժամանակագրական տվյալները վերաբերում են քարի դարից մինչև ուշ միջնադար: Գյուղի տարածքում կա խաչքարերով գերեզմանոց՝ 14–17-րդ դարերի, 2,5 *կմ* հարավ. քարե դարի բացօթյա կայան և եկեղեցի:

2005–2009 թթ. Կալավանի տարածքում հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից իրականացվեցին հնագիտական պեղումներ: Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին եզակի հուշարձաններ, որոնք գիտական մեծ արժեք են ներկայացնում ժամանակակից հնագիտության բնագավառում: Այս հուշարձանները հրապարակվել են միջազգային հայտնի ամսագրերում և ներկայացվել տարբեր միջազգային գիտաժողովներում:

Կալավանում 2013 թ. հիմնվում է «Թայմ լենդ» հիմնադրամը՝ նպատակ ունենալով բացահայտել տեղի մարդկային ու բնական ողջ ներուժը, բացահայտված ներուժը գիտակրթական ծրագրերի իրականացման և տուրիզմի զարգացման միջոցով կիրառել համայնքի համաչափ զարգացման, կենսամակարդակի բարձրացման նպատակով: Աշխարհի տարբեր երկրներից զբոսաշրջիկների մեծ հոսք է սկսում դեպի գյուղ:

Կալավան գյուղի երիտասարդների նախաձեռնությամբ կազմվել է գյուղի համակողմանի զարգացման երկարաժամկետ հայեցակարգային ծրագիր՝ 2015–2025 թթ.-ի համար: Զարգացման տասնամյա ծրագիրն իրենից ներկայացնում է գյուղի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծությանը, զարգացման հեռանկարների ուրվագծմանը և առկա հիմնախնդիրների բացահայտմանն ուղղված ռազմավարական փաստաթուղթ, որի հիմնական նպատակն է գյուղի բնառեսուրսային, ֆինանսա-տնտեսական և մարդկային ռեսուրսների համալիր գնահատման արդյունքում, առաջիկա տասը տարիների ընթացքում համատեղ ուժերով քայլեր ձեռնարկել գյուղի խնդիրների արդյունավետ լուծման և գյուղի կայուն զարգացման ուղղությամբ:

Կալավան համայնքի զարգացման մոդելի առաջնային և հիմնական կետերից է՝ տեղական ողջ մարդկային և բնական ներուժի բացահայտումն և այդ ներուժի արդյունավետ օգտագործումն, ինչպես նաև կրթվածության մակարդակի բարձրացումը (տես նկար): Հաջորդ կարևորագույն քայլն է՝ հաճախորդներին գիշերակացով ապահովելու խնդիրը: Հիմնական խնդիրը միկրովարկերի միջոցով նոր հյուրատների կառուցումն էր, որոնք ավելացել են տարեցտարի պայմանավորված այցելուների աճող հոսքով (աղյ. 1 և 2):

Գյուղում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացումը գյուղի տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկն է: Կալավանում դրվում է գիտական տուրիզմի հիմքը, որի էությունը բարձր որակավորում և գիտական կոչում ունեցող մասնագետների կողմից (հնագետ, կենդանաբան, բուսաբան, երկրաբան և այլք) տուրիստական խմբերի ուղեկցումն ու ուսուցանումն է [4]:



Կալավան գյուղի 17-ից 65 տարեկան բնակիչների գրագիտության մակարդակը (Կալավանի զարգացման ծրագիր 2015–2025 թթ.):

Աղյուսակ 1

Հյուրատների քանակական աճն ըստ տարիների (Կալավանի զարգացման ծրագիր 2015–2025 թթ.)

Հյուրատների ավելացումն ըստ տարիների	
2014	1 հյուրատուն
2017	5 հյուրատուն
2018	1 հյուրատուն
2021	1 հյուրատուն
Ընդամենը 8 հյուրատուն	

Աղյուսակ 2

Այցելուների թիվն ըստ տարիների (Կալավանի զարգացման ծրագիր 2015–2025 թթ.)

Այցելություններն ըստ տարիների	*Այցելուների թիվն ըստ տարիների*
2013	60 այցելու
2014	200 այցելու
2015	600 այցելու
2016	1200 այցելու
2017	գյուղը փակվել է մեծ պահանջարկի պատճառով, մշակվել են նոր ծրագրեր
2018	2000 այցելու
2019	2200 այցելու
2020	նվազել է համավարակով պայմանավորված

Եզրակացություն: Ըստ վերոնշյալի՝

• կայուն զբոսաշրջության զարգացումը մեծ հնարավորություն է ստեղծում տվյալ համայնքին ներկայանալու սեփական հնարավորություններով և ներուժով և, որ ամենակարևորն է եկամուտները մնում են համայնքում;

• ՀՀ այն համայնքներում, որտեղ առկա են այնպիսի մարդկային և բնական ռեսուրսներ, ինչպիսին Կալավանում է, նման մոդելների կիրառումը կարող նոր զարկ տալ համայնքային զբոսաշրջության զարգացմանը;

• մարդիկ սկսում են իրենց գիտելիքներն ու փորձն օգտագործել ի օգուտ համայնքի զարգացման և միևնույն ժամանակ՝ ի շահ իրենց:

Առաջարկություններ.

• ՀՀ-ում ստեղծել զբոսաշրջային ռեսուրսների ընդհանրական կադաստր;

• տվյալ ռեսուրսների հիման վրա առանձնացնել զբոսաշրջային դեստինացիաներ;

• ձևավորել զբոսաշրջային դեստինացիաների կառավարման մարմիններ:

Ստացվել է՝ 09.06.2021
Գրախոսվել է՝ 30.06.2021
Հաստատվել է՝ 07.07.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. www.caucasust.boku.ac.at
2. www.irtek.am
3. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Վ.Վ. *Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տեղեկատու*: Երևան, Մեկնարկ (2018), 1056 էջ:
4. *Կապանի զարգացման ծրագիր 2015–2025 թթ.*:

С. С. КЕЛЯН

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ОБЩИННОГО ТУРИЗМА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
(на примере общины Калаван)

Резюме

Туризм со своими функциями стал одной из ключевых отраслей экономического развития любого региона. Он создает рабочие места, повышает уровень жизни населения и обеспечивает быстрое развитие региона. Туризм – это сектор, который за короткий период времени обеспечивает рост финансовых ресурсов с небольшими инвестициями. В рамках данной статьи была предпринята попытка сделать анализ развития туристических возможностей на примере села Калаван Чамбаракского района Гегаркуникской области.

S. S. QELYAN

PERSPECTIVES OF COMMUNITY TOURISM DEVELOPMENT IN REPUBLIC OF ARMENIA
(on the example of the Kalavan community)

Summary

Tourism with its functions has become one of the key sectors of economic development in any region. It creates jobs, improves the living standards of the population and ensures the rapid development of the region. Tourism is a sector that provides growth in financial resources in a short period of time with little investment. Within the framework of this article, an attempt was made to analyze tourism development opportunities on the example of the village of Kalavan (Chambarak district, Gegharkunik Region).